չրկեայ, թէ քեանի ուսթայ էտա տան վերէն մեռաւ։

116. Սանասար, Բաղտասար կեացին քեռխոր մօտ, կաց պարով արին, շնորհակալ էլան, որ էսքան տարի ինոնց շախէր էր. ինոնց շնած տան ծախսն էլ քեռխէրն էր տուեր։

Քեռխոր, մօր, ղըմէնին իրար խէտ առին պերին ինոնց թաժայ տուն շնախաւորելու։

Սանասար ասաց.—Քեռխէր, նատենք, մինչև յիրիկուն նոտեցին։

Քեռխէր ասաց.—Էրթանք ժամ աղօթք անենք։

117. Սանասար ասաց.—Քեռխէր, ապա ժամ մօռացիր էմ, չըմ շինէ, որ տեղ աղօթք անենք.

Քեռխոր էլաւ ճամբու տրեց։ Թակեաւոր կընաց ուր տարէն։

Սանասար կնաց քեաղաք, ուսթայ պիրեց, ինչպէս տները շինեց, էնացեղ էլ ժամ շինեց։

118. Էրկու տարի ժամը չինեց պրծաւ, կընաց կայնաւ ճամբէի վերէն, ով որ էկաւ, պռնեց իպի, ասաց.—Ցըմ տան անունը տրէք։

Մարթ չիմացաւ, ինչ ասէր։ Քեանի մարթ պերեց էտ տեղ, պերաններ փակուաւ, չիմացան ինչ ասէր։

Մէ օր հրէշտակ էլաւ խալիւոր մարթի պէս, էկաւ Սանասարի առչև։ Սանասար տարաւ ինորը տունը շանց տուեց, ասաց, —Պապի, մեր տան անունը ի՞նչ կը տընես։

119 Պապին ասաց.—Ես չըմ տեսնայ ծեր տուն քեանիմ ա, որ անունը տնեմ։

Ասաց.—Պապի, արի ես քե շլկեմ, մեր տան չորս պիլէօր կան կեամ, տիւ տես, նոր անունը տիր։

Շլկեց տան պիլէօր կան էկաւ։

Ասաց.—Էս Սասո՞ւն։

120 Ասաց.—Պապի մեր տան անուն մնաց Սասուն։ Ապա, պապի, մեր ժամու անո՞ւն ինչ կը տնես։

—Էրթայնք ժամ տեսնեյնք։

Կընացին ժամ տեսան։

Պապին ասաց.—Ի՞նչքան պա՞նցը ա. էս էլ Մարութայ Աստուածածին։

Սանասարն ասաց.—Լա՛ւ, պապի, էս էլ էլաւ Մարութայ պանցը Աստուածածին. դէ տիւ էլ կընա։